

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱԹ» 1-ԻՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

5-21 սեպտեմբերի, 2020 թ.

Կազմակերպիչ.

Երևանի շախմատի ֆեդերացիա

Անցկացման վայր.

lichess.org օնլայն շախմատային հարթակ, Երևանի շախմատի ֆեդերացիա, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն

Մասնակիցներ.

Բոլոր նրանք, ովքեր մրցաշարի կիսաեզրափակչի և եզրափակչի օրերին կլինեն քաղաք Երևանում:

Մրցակարգ.

Օնլայն տիրույթում՝

Արենայի մրցակարգ, 2 ժամ

Շվեյցարական մրցակարգ, 11 տուր

Օֆլայն տիրույթում՝

Շվեյցարական մրցակարգ, 7 տուր՝ 38 մասնակցով,

Օլիմպիական մրցակարգ՝ 24 մասնակցով, որոնցից 14-ը կլինեն հրավիրված:

Ժամակարգ.

Օնլայն տիրույթում՝

3՝+0՝՝ ամբողջ պարտիայի համար,

Օֆլայն տիրույթում՝

10՝+5՝՝ ամբողջ պարտիայի համար:

Մասնակցության պայմաններ.

- Մրցաշարի ցուցակագրման համար հայտերն ուղարկել Երևանի շախմատի ֆեդերացիայի <https://lichess.org/team/yerevan-chess-federation> թիմին, եթե դեռ թիմի անդամ չեք հանդիսանում: Հայտը հաստատվելու համար նամակում խնդրում ենք տրամադրել անձնական տվյալները:
- Հաշվի է առնվելու 2020 թվականի սեպտեմբերի 1-ին հրապարակվող միջազգային վարկանիշների ցուցակը:

Մրցանակներ.

Մրցանակային հիմնադրամը կազմում է 1 800 000 ՀՀ դրամ:

ՏԵՂ	ՄՐՑԱՆԱԿ
1-ին	300 000 + գավաթ
2-րդ	200 000
3-4-րդ	150 000 x 2
5-8-րդ	100 000 x 4
9-16-րդ	50 000 x 8
17-24-րդ	25 000 x 8

Կոնտակտներ.

Մրցաշարի տնօրեն – ՄՎ/ՄՄ Նորայր Քալանթարյան

Համակարգող – ՖՎ Վահրամ Մեժումյան <https://lichess.org/@/muran29>

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Մրցաշարի առաջին փուլը տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը 18:00-20:00-ն lichess.org շախմատային հարթակում՝ Արենա համակարգով, lichess.org կայքի օրենքներին համաձայն: Մասնակցելու իրավունք ունեն ԵՇՖ <https://lichess.org/team/yerevan-chess-federation> թիմի անդամները, ում միջազգային ստանդարտ վարկանիշն այդ օրվա դրությամբ 2100-ից ցածր է: Մրցաշարի արդյունքներով լավագույն 50-ին իրավունք կտրվի մասնակցելու Երևանի գավաթի 1-ին խաղարկության երկրորդ փուլին:

Մրցաշարի հղումը՝ <https://lichess.org/tournament/eXN1z6U6>

Մրցաշարի կազմակերպիչներն իրավունք ունեն որակագրկել մրցանակակրին կայքի որոշմամբ կամ իրենց եզրահանգումներով՝ պարտիաների վերլուծության հիման վրա:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Մրցաշարի երկրորդ փուլը տեղի կունենա 2020 թվականին սեպտեմբերի 15-ին, ժամը 18:00-ից lichess.org շախմատային հարթակում՝ շվեյցարական մրցակարգով, 11 տուրով, lichess.org կայքի օրենքներին համաձայն: Մասնակցելու իրավունք ունեն ԵՇՖ <https://lichess.org/team/yerevan-cup-2020> թիմի անդամները, ում միջազգային ստանդարտ վարկանիշն այդ օրվա դրությամբ 2100-ից 2299-ի միջակայքում է, ինչպես նաև նախորդ

փուլում 1-ից 50-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Մրցաշարի արդյունքներով լավագույններին իրավունք կտրվի մասնակցելու կիսաեզրափակիչ փուլին: Հաջորդ փուլ անցնողների քանակը կորոշվի կիսաեզրափակչում մասնակցությունը հաստատած շախմատիստներից (Պարետի որոշմամբ մասնակիցների քանակը պետք է լինի 38): Նախնական հաշվարկներով 20 շախմատիստ կանցնի հաջորդ փուլ: Հստակ թիվը հայտնի կդառնա սեպտեմբերի 11-ին:

Մրցաշարի հղումը՝ <https://lichess.org/swiss/sZTQo7qY>

Մրցաշարի կազմակերպիչներն իրավունք ունեն որակագրկել մրցանակակրին կայքի որոշմամբ կամ իրենց եզրահանգումներով՝ պարտիաների վերլուծության հիման վրա:

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ

Մրցաշարի կիսաեզրափակիչ փուլը տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 15:00-ից Երևանի շախմատի ֆեդերացիայում (Միմոն Վրացյան 80, ք. Երևան):

Կանցկացվի շվեյցարական մրցակարգ՝ 7 տուր, ժամակարգը՝ 10՛+5՛՛ ամբողջ պարտիայի համար: Մասնակիցների քանակը՝ 38: Մրցաշարի արդյունքներով եզրափակիչ փուլ կանցնեն լավագույն 10 մասնակիցները:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ.

ա) հասված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) Բուխհոլցի,

գ) սներով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Մասնակցության իրավունք ունեն 2300 և բարձր վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր եզրափակչում անհատական իրավունք չունեն: Մասնակցությունը պետք է հաստատել մինչև ս.թ. սեպտեմբերի 9-ը՝ կապվելով Երևանի շախմատի ֆեդերացիայի հետ և նշելով FIDE ID-ն.

- <https://yerevanchessfed.com/hy/contact>
- <https://www.facebook.com/Yerevan-Chess-Federation-1526406810786302>
- <https://lichess.org/team/yerevan-chess-federation>

ԵԶՐԱՓԱԿԻՉ - ՕՐ 1

Երևանի գավաթի 1-ին խաղարկության եզրափակիչը կանցկացվի 2 օրում:

2020 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 15:00-ին կանցկացվի Երևանի շախմատի ֆեդերացիայում՝ 24 շախմատիստների մասնակցությամբ: Ընդ որում՝ 10-ը կընտրվեն կիսաեզրափակչից, 10-ը՝ վարկանիշով (ովքեր նախապես կհաստատեն մասնակցությունը), 2 լավագույն շախմատիստուհիները և 2-ը՝ կազմակերպչի ցանկությամբ:

Մասնակցությունը պետք է հաստատել մինչև ս.թ. սեպտեմբերի 9-ը՝ կապվելով Երևանի շախմատի ֆեդերացիայի հետ և նշելով FIDE ID-ն.

- <https://yerevanchessfed.com/hy/contact>
- <https://www.facebook.com/Yerevan-Chess-Federation-1526406810786302>
- <https://lichess.org/team/yerevan-chess-federation>

Մրցաշարը կանցկացվի օլիմպիական մրցակարգով. պարտվողները դուրս կմնան հետագա մրցապայքարից:

2 պարտիա - 10'+5'', հավասարության դեպքում ևս 2 պարտիա - 3'+2'', հաղթողին չորոշելու դեպքում 1 արմագեղոն պարտիա, որտեղ սպիտակները կունենան 5 բուպե, սևերը 4 բուպե ժամանակ, իսկ ոչ-ոքի արդյունքի դեպքում հաջորդ փուլ կանցնի սևերով խաղացող շախմատիստը:

Վարկանիշով լավագույն 8 մասնակիցները 1-ին փուլին չեն մասնակցի:

9-ից 24-րդ տեղերը զբաղեցնող շախմատիստներից կընտրվեն 8-ը, այնուհետև՝ 2-րդ փուլում, մնացած 16 մասնակիցների մրցապայքարում կորոշվեն լավագույն 8-ը, ովքեր մրցաշարը կշարունակեն երկրորդ խաղային օրվա ընթացքում:

Եզրափակչի *աղյուսակը* կարող էք տեսնել կից հավելվածում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ – ՕՐ 2

2020 թվականի սեպտեմբերի 21-ին, ժամը 13:00-ից տեղի կունենան Երևանի գավաթի 1-ին խաղարկության վերջին գույգերի հանդիպումները: Եզրափակչի լավագույն 8 մասնակիցները կպայքարեն հաղթողի կոչման համար Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը:

Մրցաշարը կշարունակվի օլիմպիական մրցակարգով: Հաղթողը կպարգևատրվի գավաթով: